Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05 օգոստոսի 2024 թվական ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-3/24» ծածկագրով գնման ընթացակարգը և ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար դոզաչափական հաշվիչների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-3/24» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել «Առգուս Սոլուշնս» ՍՊԸ-ն և 2024 թվականի ապրիլի 4-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Առգուս Սոլուշնս» ՍՊԸ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-3/24-01/146 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«Առգուս Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները (Ապրանքները մատակարարել պայմանագրի կնքման օրվանից մինչև 01.05.2024թ.), որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Առգուս Սոլուշնս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Առգուս Սոլուշնս» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**